«Արմենիա» Հեռուստաընկերություն, 17.03.2016
http://www.armeniatv.am/hy/56122-56122

Ինչպե՞ս գաղափարը դարձնել իրականություն

https://www.youtube.com/watch?v=P10nI-bit4c

Ինչպե՞ս ձեռք բերել կրեատիվ մտածելակերպ, ձեռնարկատիրական հմտություններ և մտածել հաջողակ բիզնեսմենի պես: Տարբեր ոլորտներում աշխատող և սովորող 120 մասնակիցներ գրանցվել են «Երիտասարդ նորարարների դպրոց» ծրագրին:

Ապագա կառավարիչը շատ լավ գիտակցում է՝ հաջող կարիերա ունենալու համար միայն համալսարանի տված գիտելիքները բավարար չեն: Մայր բուհի 3-րդ կուրսի ուսանողը ֆեյսբուքի միջոցով վերջերս է իմացել «Ստեղծագործական ներուժ. ձեռնարկատիրական ոլորտում նորարարությունների ստեղծում և զարգացում» խորագրով սեմինարի մասին: Էլենն ու ընկերներն այսօր արդեն մասնակցում են այդ սեմինարին: Ինչպե՞ս ձեռք բերել կրեատիվ մտածելակերպ, ձեռնարկատիրական հմտություններ և մտածել հաջողակ բիզնեսմենի պես: Ինչպե՞ս գաղափարը դարձնել իրականություն ու հասնել հաջողությունների: Այս հարցերի պատասխանները ստանալու համար տարբեր ոլորտներում աշխատող և սովորող մոտ 120 մասնակից գրանցվել է «Երիտասարդ նորարարների դպրոց» ծրագրին: Ուսանողներ, գիտնականներ, անհատ նորարարներ ու ձեռներեցներ 2- 3 ամիս կմասնակցեն հատուկ դասընթացների: Նախաձեռնության հեղինակ «Նորամուծության և ձեռնարկության ազգային կենտրոն»-ի տնօրենի խոսքով՝ նախկինում կազմակերպված դասընթացները տվել են իրենց արդյունքը և շատ երիտասարդ կադրեր իրենց մասնագիտությամբ հասել են հաջողությունների:

Տեսական և գործնական դասընթացների միջոցով մասնակիցները կծանոթանան նորարարական գաղափարների գեներացման մեթոդներին, կիմտանան բիզնես մոդելավորման ու պլանավորման գործընթացներում, կստանան հատուկ գիտելիքներ սեփական բիզնեսի արդյունավետ կազմակերպման և առաջխաղացման համար: Ծրագրին մասնակցությունը անվճար է: